

**Ռոբերտ Քոուլ,** *դիրիժոր*

Ավարտել է Հարավային Կալիֆորնիայի համալսարանի երաժըշտական բաժինը, ապա դիրիժորության ասպարեզում իր ուսումը շարունակել Ռիչարդ Լերթի մոտ `Կալիֆորնիայում, Լեոնարդ Բերնսթայնի և Լեոն Բարզինի մոտ` Tanglewood երաժշտական կենտրոնում և Հանս Սվարովսկու մոտ` Եվրոպայում: Ռոբերտ Քոուլը Buffalo Philharmonic նվագախմբի դիրիժոր էր և Լոս Անջելեսի Ballet Society-ի գեղարվեստական ղեկավարն ու գործադիր տնօրենը: 1986-ից Կալիֆորնիայի համալսարանի (Berkley) Cal Performances-ի ղեկավարն է: Հանդիսանում է 1990-ին իր կողմից հիմնադրած` վաղ դասական երաժշտության Բերկլիի միջազգային փառատոնի և ցուցահանդեսի գլխավոր տնօրենը: 2003-ին նշանակվել է Պերմի օպերայի և բալետի թատրոնի գլխավոր հրավիրյալ դիրիժոր: Սանկտ Պետերբուրգի «Սպիտակ գիշերներ» փառատոնի շրջանակներում Մարիինյան թատրոնում ղեկավարել է Պերմի բալետի և Մարիինյան թատրոնի նվագախմբի համատեղ ելույթը: 2002-ին Քոուլը ղեկավարել է Նյու Յորքի Brooklyn Academy of Music-ի The Hard Nut բալետը` Մարկ Մորիսի պարային խմբի հետ: Նախորդ համերգաշրջանում նույն գործը կատարվեց նաև Լոնդոնի Sadler's Wells- ում: 1995-ին ֆրանսիական կառավարությունը Քոուլին պարգևատրեց Արվեստների Ասպետի շքանշանով:

**Robert Cole,** *conductor*

Robert Cole received his MA in music from the University of Southern California School of Music and went on to study conducting with Richard Lert in California; Leonard Bernstein and Leon Barzin at the Tanglewood Music Center; and Hans Swarowsky in Europe. He served as associate conductor of the Buffalo Philharmonic Orchestra and was the executive director and music director of the Ballet Society of Los Angeles. Since 1986, he has been director of Cal Performances on the campus of the University of California, Berkeley. Cole is also general director of the Berkeley Festival and Exhibition, an international festival of early music he founded in June of 1990. In 2003 he was appointed Principal Guest Conductor of the Perm Opera and Ballet Theater (Russia). Recently he conducted the Kirov Orchestra with the Perm Ballet at the Mariinsky Theatre in St. Petersburg as part of the "White Nights" Festival. In 2002 Cole conducted The "Hard Nut" with the Mark Morris Dance Group at the Brooklyn Academy of Music in New York, and conducted the same work last season at Sadler's Wells in London. In 1995 Mr. Cole was named a Chevalier of the Order of Arts and Letters by the Government of France.



**Ռուբեն Կոսեմյան,** *ջութակ*

Ծնվել է 1973-ին Երևանում: Հինգ տարեկանից սովորել է ջութակ իր հոր` Ալեքսանդր Կոսեմյանի ղեկավարությամբ: 1987-ից կրթությունը շարունակել է Մոսկվայի կոնսերվատորիայում` պրոֆ.Մայա Գլեզարովայի դասարանում: Նրա դասատուների թվում է նաև Երևանի կոնսերվատորիայի պրոֆ. Էդուարդ Թադևոսյանը: Ռ.Կոսեմյանը մասնակցել է Ռուբեն Ահարոնյանի, Ժան Տեր-Մերկերյանի, Իգոր Օյստրախի և Թիբոր Վարգայի վարած վարպետության դասընթացներին: 1997-ին արժանացել է Վ.Սպիվակովի անվան կրթաթոշակի: 2000-ից Ռ.Կոսեմյանը դասավանդում է Երևանի կոնսերվատորիայում` ջութակի և կամերային անսամբլի դասարաններում: Նույն թվականին ղեկավարել է Իրանի Կիժ կղզու "Kish Art and Music House" հաստատության դասական երաժշտության բաժինը: Ելույթներ է ունեցել Գերմանիայում, Ֆրանսիայում, Իրանում, ԱՄՆ-ում և Ռուսաստանում: Նվագախմբի հետ կատարել է Բրամսի, Գլազունովի, Խաչատրյանի, Սարյանի, Չայկովսկու, Մենդելսոնի, Մոցարտի և Բրուխի ջութակի կոնցերտները: Կատարել է մի շարք ձայնագրություններ, որոնցից վերջինը թողարկել է "Armenian Music Center" կենտրոնը:

**Ruben Kosemian,** *violin*

Born in 1973 in Yerevan. From the age of 5 studied violin under the guidance of his father, violinist Alexander Kosemian. From 1987 continued his education at the Moscow Conservatory with Maya Glezarova. Among his teachers is the Professor of Yerevan Conservatory Eduard Tadevossian. Ruben Kosemian has attended master classes given by Ruben Aharonian, Jean Ter-Merguerian, Igor Oistrach and Tibor Varga. In 1997 Ruben has been granted the scholarship of Vladimir Spivakov. Since 2000 he teaches at the violin and chamber ensemble classes of the Yerevan Conservatory. On the same year, Kosemian undertook directorship of the Music Department of "Kish Art and Music House" (Kish Island, Iran). Ruben Kosemian has concertized in Germany, France, Iran, the US and Russia. With the symphony orchestra he has appeared with violin concertos of Brahms, Glazunov, Khachaturian, Saryan, Tchaikovsky, Mendelssohn, Mozart and Bruch. Kosemian has made a number of recordings, with the last one released by the "Armenian Music Center".

**Ս.Ֆրանկ: Սիմֆոնիա ռե մինոր (1888թ.)**

Պրեմիերան կայացել է 1889-ին` Փարիզում, հեղինակի ղեկավարությամբ: Ֆրանսիական երաժշտության մեջ այս գործը սկիզբ է դնում եռամաս սիմֆոնիայի ավանդույթին: Կյանքի իմաստի մասին խորհող արվեստագետի փիլիսոփայական մտորումների թեման, սկիզբ առնելով դանդաղ նախաբանի հարցական ինտոնացիաներում, լայն զարգացում է ստանում 1-ին և 3-րդ մասերում` արտահայտելով երազանք և ընդվզում, պաթետիկա և առնական պոռթկում: Քնարական երկրորդ մասում լսելի է ֆրանսիական ժողովրդական երգի անպաճույճ մեղեդին` եղջերափողի կատարմամբ:

**Մ.Բրուխ: «Շոտլանդական ֆանտազիա» ջութակի եւ նվագախմբի համար (1863թ.)**

Գերմանացի կոմպոզիտոր, դիրիժոր և մանկավարժ Մ.Բրուխի ստեղծագործությունների շարքում Ջութակի թիվ 1 կոնցերտի կողքին մեծ տարածում է ստացել «Շոտլանդական ֆանտազիան»: Դա հարգանքի տուրք էր շոտլանդացիներին` նրանց ծավալած ազատագրական շարժման կապակցությամբ: Լայնորեն օգտագործված են շոտլանդական ժողովրդական (այդ թվում` հայրենասիրական, հերոսական) երգերի մեղեդիները: Ստեղծագործության կոմպոզիցիան բարդ է, ինչ որ չափով հիշեցնելով բազմամաս կոնցերտների կառուցվածքը: Ցայտուն մեղեդայնությունը, ջութակի կատարողական հարուստ հնարավորությունների օգտագործումը, գունեղ գործիքավորումը և նվագախմբի ակտիվ դերը գրավիչ են դարձնում այս ստեղծագործությունը կատարողների համար:

**Է.Էլգար: Նվագախմբային Enigma վարիացիաներ (1899թ.)**

«Առեղծվածային» անվանում ունեցող այս գործը (Enigma նշանակում է` *առեղծված*) մեծ հռչակ բերեց անգլիացի կոմպոզիտորին: Ինքնաստեղծ թեման և բազմաբնույթ 14 վարիացիաները ամփոփում են Էլգարի բարեկամներից մեկի երաժշտական դիմանկարը: Բարեկամի անունը չի հայտարարվում` արդարացնելով ստեղծագործության ոչ սովորական խորագիրը: Enigma-ն բարձր են գնահատել Ռիմսկի-Կորսակովը, Գլազունովը և աչքի ընկնող այլ գործիչներ:



## Ծրագիր / Program

**Սեզար Ֆրանկ**
**(1822-1890)**
**Cesar Franck**

Սիմֆոնիա ռե մինոր
Symphony in D-moll

*1.Lento.Allegro non troppo*
*2.Allegretto*
*3.Allegro non troppo*

### Ընդմիջում / Intermission

**Մաքս Բրուխ**
**(1838-1920)**
**Max Bruch**

«Շոտլանդական ֆանտազիա»
ջութակի և նվագախմբի համար
Scottish Fantasy for Violin and Orchestra

*Einleitung. Grave*
*1.Adagio cantabile*
*(կատարվում են առանց ընդմիջման)*
*(movements are performed without break)*

*2.Allegro. Tanz*
*3.Andante sostenuto*
*(կատարվում են առանց ընդմիջման)*
*(movements are performed without break)*

*4.Finale.Allegro guerriero*

Մենակատար՝ **Ռուբեն Կոսեմյան**
Soloist: **Ruben Kosemian**

**Էդուարդ Էլգար**
**(1857-1934)**
**Edward Elgar**

Enigma վարիացիաներ
Enigma Variations

Դիրիժոր՝ **Ռոբերտ Քոուլ**
Conductor: **Robert Cole**

## Առաջիկա համերգները / The upcoming concerts

**Արամ Խաչատրյան համերգասրահ** — **Aram Khachaturian Concert Hall**

**Վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ** — **Armenian Philharmonic Orchestra**

Գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր
**Էդուարդ Թոփչյան**

Artistic Director & Principal Conductor
**Eduard Topchjan**

### 08.06.06

Հանդիսավոր երեկո-համերգ՝
նվիրված ՀՊՖՆ-ի 80-ամյակին
The Armenian Philharmonic Orchestra's
80th Anniversary Celebration

### 16.06.06

Մենակատար — Soloist
**Ալեքսանդր Տրեգեր** — **Alexander Treger**
*ջութակ (ԱՄՆ)* — *violin (USA)*

Դիրիժոր — Conductor
**Էդուարդ Թոփչյան** — **Eduard Topchjan**

Ծրագրում / Program

**Բրամս** — **Brahms**
Ջութակի կոնցերտ — Violin Concerto
**Բրամս** — **Brahms**
Սիմֆոնիա թիվ 4 — Symphony No.4


armentel
NOY
ACBA BANK
ՀԱՅԳՅՈՒՂՓՈԽԲԱՆԿ
Marriott
ARMENIA YEREVAN


**Ինֆորմացիոն հովանավորներ**
**Publicity of this concert is provided by**


ARDZAGANK
Որակոս
Ռադիո Վէմ
Radio Vem FM 101.6
ARARAT


Բուրմունքի և հնչյունի ներդաշնակություն
Երևանի կոնյակի գործարան
Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ
**Harmony of Taste and Sound:**
Yerevan Brandy Company -
Armenian Philharmonic Orchestra


Մաշտոցի պողոտա 46 Mashtots Avenue
ՀՀ, Երևան 375002 Yerevan Armenia
Հեռ/Tel:(+374 10) 560645
Ֆաքս/Fax:(+374 10) 564965
E-mail: apo@arminco.com
www.apo.am


ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀ
ARAM KHACHATURIAN CONCERT HALL

ՄԱՅԻՍԻ 26 MAY 2006

**Վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ**

Գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր
**Էդուարդ Թոփչյան**

**armenian philharmonic orchestra**

Artistic Director & Principal Conductor
**Eduard Topchjan**

Մենակատար
**Ռուբեն ԿՈՍԵՄՅԱՆ**
**ջութակ**

Soloist
**Ruben KOSEMIAN**
**violin**

Դիրիժոր
**Ռոբերտ ՔՈՈՒԼ**
*(ԱՄՆ)*

Conductor
**Robert COLE**
*(USA)*


Համերգաշրջանի հովանավոր
2005/2006
Concert Season is sponsored by
AGBU
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
Armenian General Benevolent Union